

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում ՇՊՀ-ում նախատեսված «Կայուն տուրիզմի զարգացում և մարզամշակութային միջոցառումների կազմակերպում ու անցկացում» դասընթացի գործնական և լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձևավորման համար անհատ-խորհրդատուի մրցույթ

02 մայիսի 2018թ.

Ծրագրի անվանումը. «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի նպատակն է տարածաշրջանային մարտահրավերներին և աշխատաշուկայի պահանջներին ու հեռանկարներին համահունչ դասընթացների, ծառայությունների և կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով Շիրակի պետական համալսարանի /ՇՊՀ/ հզորացումը՝ ուղղված Շիրակի մարզի համաչափ զարգացմանը:

*Շիրակի պետական համալսարանը հայտարարում է «Կայուն տուրիզմի զարգացում և մարզամշակութային միջոցառումների կազմակերպում ու անցկացում» դասընթացի գործնական և լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական ձևավորման համար անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթ:*

Անհատ-խորհրդատուի աշխատանքի նկարագրի, գործունեության շրջանակի, պահանջվող որակավորման, փորձի, ինչպես նաև գնահատման չափանիշների նկատմամբ ներկայացվող պահանջներն են՝

- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ի համապատասխան չափորոշային փաստաթղթերը, ինչպես նաև առկա և ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված նյութատեխնիկական բազան, «Կայուն տուրիզմի զարգացում ու մարզամշակութային միջոցառումների կազմակերպում և անցկացում» դասընթացի հայեցակարգային ծրագիրը,

- ✓ ուսումնասիրել ՇՊՀ-ում ՆՈՐԿԵՆՏ ծրագրով նախատեսված և իրականացված հեռաուսուցման դասընթացի կազմակերպման ու իրականացման գործընթացների հայեցակարգային ծրագիրը և ուսումնական նյութերը,
- ✓ ուսումնական նյութերի մշակման աշխատանքներն իրականացնել՝ համագործակցելով բազմամասնագիտական թիմի մյուս խորհրդատուների հետ,
- ✓ ուսումնասիրել «Կայուն տուրիզմի զարգացում ու մարզամշակութային միջոցառումների կազմակերպում և անցկացում» դասընթացի գործնական ու լաբորատոր նյութերի ուսումնամեթոդական ձևավորման տեղական և միջազգային փորձը,
- ✓ համագործակցել դասընթացի որակի ապահովման մասնագետի հետ՝ 30 շահառուների կարիքների և կարողությունների ուսումնասիրման գործընթացում,
- ✓ համագործակցել դասընթացի որակի ապահովման մասնագետի հետ՝ մասնակցելով դասընթացի արդյունավետության գնահատման աշխատանքներին,
- ✓ մշակել դասընթացի գործնական ու լաբորատոր մասի ուսումնամեթոդական ձևավորման նախնական տարբերակը,
- ✓ վերանայել և բարելավել դասընթացի գործնական ու լաբորատոր մասի ուսումնամեթոդական ձևավորումը՝ նկատի առնելով շահառուների շրջանում դասընթացի որակի ապահովման մասնագետի մշտադիտարկման արդյունքները և ՇՊՀ-ի ղեկավար կազմի հետ քննարկման արդյունքները:

**Խորհրդատուի որակավորման նվազագույն պահանջները և գնահատման չափանիշները.**

№	Անվանումը	Պահանջը	Միավորը
1.	Որակավորում	✓ Մագիստրոս և/կամ դիպլոմավորված մասնագետ:	20
2.	Ընդհանուր աշխատանքային փորձ	✓ դասավանդման փորձ /ՇՊՀ-ում աշխատանքային փորձը կհամարվի առավելություն/, ✓ անհատական և թիմային աշխատանքի փորձ:	40
3.	Հատուկ	✓ մասնագիտական դասընթաց(ներ)ի	40

	<b>աշխատանքային փորձ</b>	գործնական ու լաբորատոր մասի ուսումնամեթոդական ձևավորման փորձ, ✓ դասընթացի գործնական ու լաբորատոր մասի վարման ու գնահատման տեխնոլոգիաների իմացությունն ու կիրառման փորձը ցանկալի է, ✓ ռուսերենի և անգլերենի բավարար իմացությունը ցանկալի է:	
	<b>Ընդամենը՝</b>		<b>100</b>

Խորհրդատուի աշխատանքի կատարման ժամանակահատվածը՝ 3 ամիս:

Անհատ խորհրդատուի ընտրության մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ պետք է ներկայացնեն.

- դիմում (ձևը կցվում է)
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն ՆՄՀ Ղեկավար ձեռնարկով սահմանված «Անհատ խորհրդատուների ընտրության» մեթոդի:

Լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ հետաքրքրվածության հայտը ներկայացնելու համար դիմել հետևյալ հասցեով կամ էլ. փոստով. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ (ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4, Բ2-12 սենյակ), [shirakhovhannisyan@mail.ru](mailto:shirakhovhannisyan@mail.ru), հեռախոս՝ 0312 2 84 69:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018 թվականի մայիսի 16-ը, ժամը 17:00 ներառյալ:

Հայաստանի Հանրապետություն, ք.Գյումրի, փ.Պարույր Սևակի 4

Դիմող՝ \_\_\_\_\_

Հեռ. \_\_\_\_\_

Էլ. Փոստ \_\_\_\_\_

### Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցելու «Շիրակի պետական համալսարանի հզորացման և կրթական ծառայությունների բազմազանեցման միջոցով տարածաշրջանային համաչափ զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում

---

---

---

անհատ-խորհրդատուի ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը:

Դիմող՝ \_\_\_\_\_ / \_\_\_\_\_ /

(ստորագրություն)

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2018 թ.